https://doi.org/10.46991/S&L/2022.94.116

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գոհար Գրիգորյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր

Ներկայիս աշխարհաքաղաքական իրողությունների՝ գլոբալիզացիայի և ազատ ձեռնարկատիրական գործունեության պայմաններում սնանկության (անվճարունակության) մասին օրենսդրության ամբողջական և պատշաճ կարգավորումը կենսական դեր և նշանակություն ունի: Տնտեսական հարաբերությունները արդեն հատել են պետական սահմանները, և տարբեր պետությունների տնտեսությունների միջազգայնացման համատեքստում անդրսահմանային սնանկությանը վերաբերող կանոնները մեծ նշանակություն և բարձր հեղինակություն են ձեռք բերում: Հետևաբար, անդրսահմանային սնանկության վերաբերյալ օրենսդրական արդյունավետ, պարզեցված և ճկուն կարգավորումներ նախատեսելու հրամայականը բխում է շուկայական առևտրի և օտարերկրյա ներդրումների խրախուսման քաղաքականությունից:

Անդրսահմանային սնանկության մասին օրենքները կարգավորում են անձի անվճարունակությունից բխող և օտարերկրյա տարրով ծանրաբեռնված իրավահարաբերությունները, որոնք արտահայտվում, սակայն չեն սպառվում հետևյալ դեպքերով՝ պարտապանի գույքի առկայությունը այլ պետությունում, օտարերկրյա պարտատերերի և պարտապանի մասնակցությունը իրավահարաբերությանը, ինչպես նաև երկու կամ ավելի պետության տարածքում նույն պարտապանի նկատմամբ սնանկության վարույթների հարուցում: Պետք է նշել, որ նույնաբովանդակ են կարգավորումները, օրինակ, նաև միջազգային առևտրային արբիտրաժի դեպքում: Այսպես, եթե զուգահեռներ անցկացնենք այս երկու ինստիտուտների միջև, կարող ենք արձանագրել, որ արբիտրաժը որպես միջազգային գնահատելու և համապատասխան կանոնները կիրառելու հնարավորությունը պարզելու համար ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի ընդունած «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» մոդելային օրենքը սահմանում է հետևյալ չափանիշները.

ա) արբիտրաժային համաձայնագրի կողմերը համաձայնագրի կնքման պահին ունեն գործունեության վայրեր (ձեռնարկություններ) տարբեր պետություններում, կամ

բ) ստորև նշվածներից մեկը գտնվում է այն պետությունից դուրս, որտեղ կողմերն ունեն իրենց գործունեության վայրը.

(i) արբիտրաժի վայրը, եթե որոշվել է արբիտրաժային համաձայնագրով.

(ii) ցանկացած վայր, որտեղ պետք է կատարվի առևտրային հարաբերություններով պարտավորությունների էական մասը, կամ այն վայրը, որի հետ վեճի առարկան առավել սերտորեն կապված է, կամ

գ) կողմերը ուղղակիորեն համաձայնել են, որ արբիտրաժային համաձայնագրի առարկան վերաբերում է մեկից ավելի երկրների[1]:

[1] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/mal-digest-2012-e.pdf, էջ 7-8:

Անդրսահմանային սնանկության հիմնախնդրի բացահայտման համար առաջին հերթին կարևոր նշանակություն ունեն քննարկվող ինստիտուտի վերաբերյալ տեսական մոտեցումների ուսումնասիրությունը և վերլուծությունը: Այսպես, գրականության մեջ առաջ են քաշվել մի շարք սկզբունքներ (տեսություններ), որոնք վերաբերում են ինչպես անդրսահմանային սնանկության մասին օրենքների մշակման հիմքերին և սկզբունքներին, այնպես էլ կիրառելի իրավունքի ընտրության հետ կապված հարցերին: Այդ սկզբունքներն են՝ *տարածքային (տերիտորիալ), ունիվերսալ, ձևափոխված ունիվերսալիզմ և համագործակցային տերիտորիալ:*

Պատմականորեն ձևավորված առաջին տեսությունը **տարածքայինն** է, որը հիմնված է պետությունների ինքնիշխանության և սուվերենության գաղափարի վրա: Այս տեսության էությունն այն է, որ յուրաքանչյուր պետություն անդրսահմանային սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացնում է ներպետական իրավունքի հիման վրա: Որպես կանոն, այս մոտեցումը հիմնված է պարտապանի հետ իրավահարաբերություններում սեփական պարտատերերի շահերը պաշտպանելու պետության նպատակի վրա այդ պետության տարածքում գտնվող և օտարերկրյա պարտապանին պատկանող գույքի հաշվին:[1] Հարկ է նկատել, որ տարածքային սկզբունքի դեպքում առկա է մի քանի զուգահեռ վարույթների հարուցման հնարավորություն, քանի որ այս տեսությունը հիմնվում է պարտապանի ակտիվների գտնվելու վայրում վարույթ հարուցելու հնարավորության վրա, որի դեպքում, սակայն, որևէ պետության տարածքում հարուցված վարույթը չունի արտատարածքային ազդեցություն: Այլ կերպ ասած՝ կարող են հարուցվել այնքան վարույթներ, որքան պարտապանը պետություններում ունի ակտիվներ և գույք:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ տարածքային սկզբունքի դեպքում կիրառվում է lex fori-ն (դատարանի վայրի օրենքը), և պարտատերերը կարող են իրենց պահանջները ներկայացնել միայն տեղական ակտիվների նկատմամբ՝ ազգային օրենսդրության կանոնների համաձայն: Իսկ օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը որևէ պետության տարածքում կատարվում են քաղաքացիադատավարական հատուկ ընթացակարգեր անցնելու ճանապարհով:

Չնայած առաջին հայացքից տարածքային սկզբունքը բավականին իրագործելի է թվում և անլուծելի խնդիրներ չի առաջացնում օրենսդրի համար, սակայն մեր համոզմամբ՝ անդրսահմանային սնանկության խնդիրը մեկ պետության հոգածության առարկա չէ, այլ անհրաժեշտ է յուրաքանչյուր պետության ջանքերի, հնարավորությունների համախմբում՝ որպես համաշխարհային տնտեսության մասնակիցների: Մինչդեռ պետությունները չեն ցանկանում հրաժարվել իրենց ազգային օրենսդրությամբ ամրագրված սկզբունքներից և զիջել իրենց ինքնիշխանությունը, թույլատրել միջամտություն իրենց իրավասությանը: Ինչպես նշել է Չարլզ Բուֆը. «Միջազգային մասնավոր իրավունքի ամենասարսափելի բացթողումներից մեկը անդրսահմանային անվճարունակության հարցերի շուրջ ազգերի միջև կոնսենսուսի բացակայությունն է»[2]:

Բացի այդ, քննարկվող տեսությունը ունի հետևյալ թերությունները.

- այս տեսության կիրառումը հանգեցնում է անձին անվճարունակ ճանաչելու մասին վարույթներ հարուցելու երկու կամ ավելի պետություններում, որոնք, սակայն, միմյանց զուգահեռ ընթանալով, չունեն համակարգման, փոխազդեցության

[1] Տե՛ս **Мохова Е. В.,** Доктрина основного производства при трансграничной несостоятельности юридических лиц, диссерт. на соиск. уч. степ. кандит. юрид. наук, Москва, 2009, էջ 63:

[2] Տե՛ս **Собина Л. Ю.,** Признание иностранных банкротств в международном частном праве, диссерт. на соиск. уч. степ. кандит. юрид. наук, Москва, 2010, էջ 33:

կամ փոխկապվածության որևէ սահման.

- մենք կիսում ենք այն հեղինակների մտահոգությունը, որ նշված մոդելը, հանգեցնելով «պարտատերերի մրցավազքի», չի կարող կենսունակ լինել. նշվածը մտահոգիչ է հատկապես անդրսահմանային սնանկության հատուկ խնդիրների լուծման դեպքում, օրինակ՝ միջազգային ողջ կազմակերպության առողջացման կամ արդյունավետ լուծարման գործընթացը կարող է ունենալ հակառակ արդյունք, եթե յուրաքանչյուր առանձին իրավասություն զբաղվի անվճարունակության միայն մի մասով.
- ընթացակարգերի և վարույթների բազմազանությունը հանգեցնում է ծախսերի մեծացման՝ նվազեցնելով գործընթացների արդյունավետությունը.
- այն նվազագույնի է հասցնում մեկ վարույթի շրջանակում պարտապանի ակտիվները գնահատելու և վաճառելու հնարավորությունը՝ առանձին դեպքերում հանգեցնելով պարտապանի ակտիվների և գույքի իրացման ակնհայտ ոչ բարենպաստ պայմանների.
- այս սկզբունքի կիրառումը կարող է հանգեցնել նաև պարտատերերի միջև պարտապանին պատկանող ակտիվների անհավասար բաշխման՝ պայմանավորված դրանց՝ միայն խիստ որոշակի տարածքում սահմանափակվածությամբ՝ նրանց դնելով անհավասար պայմանների մեջ:

Ուշադրության արժանի հաջորդ սկզբունքը **ունիվերսալ կամ համընդհանուր** սկզբունքն է, որը հիմնվում է առանձին պետության տարածքում սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերի միջազգային ազդեցության, պարտապանի գույքի ամբողջականության, պարտատերերի հավասարության և միայն մեկ սնանկության ընթացակարգի արդյունավետության սկզբունքների ճանաչման վրա: Այսինքն՝ սնանկության վարույթն ունի գլոբալ ազդեցություն և ուղղված է պարտապանի բոլոր ակտիվները այդ վարույթի շրջանակում ներառելուն՝ անկախ դրանց գտնվելու վայրից: Այս սկզբունքի կարևոր առավելությունը պարտատերերի միջև ակտիվների արդար բաշխումն է (բոլոր պարտատերերը մասնակցում են հավասար պայմաններով՝ նույն օրենքի դրույթներին համապատասխան), ինչպես նաև այդ համակարգի և կիրառելի օրենքի կանխատեսելիությունը: Նշվածը հնարավորություն է ընձեռում պարտատերերին այդ օրենսդրության դրույթների հաշվառմամբ ընտրել իրենց հնարավոր կոնտրագենտներին՝ գնահատելով ռիսկերը հնարավոր անվճարունակության դեպքում: Ընդ որում, այս դեպքում կայացված բոլոր դատական ակտերը erga omnes ուժի մեջ են մտնում այլ երկրներում, որտեղ անվճարունակ պարտապանը կարող է ունենալ ակտիվներ՝ առանց որևէ լրացուցիչ ճանաչման գործընթաց հաղթահարելու[1]:

Այն դեպքում, երբ պետության անդրսահմանային սնանկության վերաբերյալ օրենքի հիմքում ընկած է համընդհանրության սկզբունքը, որի ուժով տվյալ պետության իրավասու մարմինների հարուցած սնանկության վարույթը բացառիկ է և ունի համաշխարհային ազդեցություն, այս մոտեցումը տեսության մեջ կոչվում է «արտաքին ունիվերսալիզմ»: Իսկ այն դեպքում, երբ պետությունն ընդունում է օտարերկրյա դատավարությունների ազդեցությունը իր պետության տարածում, անվանվում է «ներքին ունիվերսալիզմ»[2]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ համընդհանրության սկզբունքին բնութագրական են հետևյալ առանձնահատկությունները.

- պարտապանի նկատմամբ սնանկության միայն մեկ ընթացակարգի իրականացում միասնական կանոնների հիման վրա («մեկ դատարան, մեկ իրավունք»).
- պարտապանի նկատմամբ լրացուցիչ (զուգահեռ) ընթացակարգերի անթույ-

---

[1] Տե՛ս **Рягузов А. А.,** Правовое регулирование трансграничной несостоятельности, диссерт. на соиск. уч. степ. кандит. юрид. наук, Москва, 2008, էջ 92-93:

[2] Տե՛ս **Reinhard Bork,** Principles of cross-border insolvency law, Intersentia Ltd, 2017, էջ 24:

լատրելիությունը.

- պարտապանի ամբողջ գույքի միավորումը մեկ ընթացակարգում՝ անկախ դրանց գտնվելու վայրից[1].
- իրավասու դատարանի որոշումների արտատարածքային գործողություն և ազդեցություն:

Այս մոդելը, սակայն, զերծ չէ թերություններից, որոնցից հիմնականը հետևյալներն են. հիմնական թերությունը, որը հասարակական հարաբերությունների զարգացման այս փուլում, թվում է, կարող է անհնարին դարձնել վերջինիս գոյությունը, այն է, որ դժվար է որոշել այն միակ իրավասու երկիրը, որի սնանկության մասին օրենքը կիրառելի կլինի առաջացող հարաբերությունների նկատմամբ, և որի դատարանը իրավասու է քննել այդ սնանկության գործը: Առաջին հերթին պետությունները չեն ցանկանում հրաժարվել իրենց ինքնիշխանությունից, սուվերենությունից՝ հոգուտ օտարերկրյա իրավասության, բացի այդ, առանձին պետությունների օրենսդրություններում բացակայում են որոշակի հարցեր կարգավորող ինստիտուտներ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է կրկնակի լուծարման ինստիտուտը, որը, սակայն, գործում է Ավստրիայում: Նման պայմաններում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ այդ ինստիտուտների կիրառման հարցում: Բացի այդ, այս մոդելի շրջանակում միշտ չէ, որ հնարավոր է պատշաճ ապահովել պարտատերերի նկատմամբ հավասարության սկզբունքը. պարտատերերից ոմանք ստիպված են մասնակցել օտարերկրյա պետության տարածքում հարուցված սնանկության վարույթին, որը պահանջում է առավել մեծ ռեսուրսների ծախս՝ ի տարբերության տվյալ պետության տարածքում գտնվող պարտատերերի[2]:

Ինչպես բխում է վերոգրյալից, նշված տեսությունները գործնականում առաջ են բերում մի շարք խնդիրներ, ուստի մի շարք հեղինակներ մշակել են նոր՝ մոդիֆիկացված մոդելներ անդրսահմանային անվճարունակության կարգավորումների վերաբերյալ: Յան Ֆլետչերը նշել է, որ անդրսահմանային անվճարունակության կարգավորման մեխանիզմի ստեղծման խնդրի արդյունավետ (օպտիմալ) լուծումը կարող է լինել տարածքային և ունիվերսալ մոդելների սինթեզի վրա հիմնված մոդելը: Նման սինթեզը ներառում է սնանկության հիմնական և երկրորդային վարույթների համակցությունը[3]:

Համագործակցային տարածքային սկզբունքը առաջ է քաշվել ԼոՊակիի կողմից, ով նշում էր, որ յուրաքանչյուր իրավասության ազդեցություն տարածվում է միայն իր տարածքում գտնվող ակտիվների վրա: Սակայն այս դեպքում հնարավոր է համագործակցություն զուգահեռ սնանկության վարույթների միջև յուրաքանչյուր պետության կողմից նշանակված սնանկության գործով կառավարիչների միջոցով, որոնք ներկայացնում են վերջինիս տարածքում գտնվող սնանկության գույքը:

Ինչ վերաբերում է ձևափոխված (մոդիֆիկացված) ունիվերսալ մոդելին, պետք է արձանագրել, որ այն հիմնված է իրավասու դատարանի իրավասության ընդլայնման հայեցակարգի վրա, քանի որ նախատեսում է լրացուցիչ կամ երկրորդային վարույթներ հարուցելու հնարավորություն: Այսպես, պարտապանի ակտիվների գտնվելու վայրում հնարավոր է հարուցել «երկրորդային» վարույթ, որի իրավասությունը սահմանափակվում է պարտապանի՝ տվյալ պետության տարածքում գտնվող ակտիվներով:

Չնայած առաջարկվող նոր տեսությունները հրաժարվեցին տարածքային և ունիվերսալ սկզբունքների ծայրահեղ մոտեցումներից, սակայն բոլոր դեպքերում պահպանել են այդ տեսությունների բազմաթիվ թերություններ: Անվճարունակութ-

---

[1] Տե՛ս **Собина Л. Ю.,** նշված աշխ., էջ 44:

[2] Տե՛ս **Карелина С. А.,** Несостоятельность (банкротство), учебный курс, Том 2, Москва, Статут, 2019, էջ 726-727:

[3] Տե՛ս **Собина Л. Ю.,** նշված աշխ., էջ 49:

յան իրավական կարգավորման նպատակների և, համապատասխանաբար, օտարերկրյա վարույթի հետևանքների ճանաչման հնարավորության վերաբերյալ տարբեր պետությունների միջև փոխզիջում գտնելու խնդիրը դեռևս շարունակում է արդիական մնալ: Ավելին, առկա է այս կատեգորիայի գործերով միջազգային իրավասության չափորոշիչների միավորման և օրենքների հակասության կարգավորման խնդիր ևս:

Վերը նշված տեսությունները և դրանց բնութագրական առանձնահատկությունները չէին կարող իրենց հետքը չթողնել և չարտացոլվել անդրսահմանային սնանկության վերաբերյալ միջազգային առանձին փաստաթղթերում: Այսպես, ունիվերսալ մոդելին բնորոշ վերը թվարկված բոլոր առանձնահատկությունները արտացոլվել են ԵՄ 2015 թվականի մայիսի 20-ի N 2015/848 սնանկության կանոնակարգի մեջ: Մասնավորապես, կանոնակարգի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անդամ պետության դատարանները, որոնց տարածքում գտնվում է պարտապանի հիմնական շահերի կենտրոնը, իրավասու են սնանկության վարույթ հարուցելու («սնանկության հիմնական վարույթ»), իսկ հիմնական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ պարտապանը իրականացնում է իր շահերի կառավարումը, և որը կարող է որոշվել երրորդ անձանց կողմից: Եթե բացառություններ նախատեսված չեն, 7-րդ հոդվածի 1-ին կետի ուժով սնանկության վարույթի և դրա հետևանքների նկատմամբ կիրառվում է այն անդամ պետության օրենսդրությունը, որի տարածքում հարուցվել է սնանկության վարույթը: Կանոնակարգի առանձին դրույթների համակարգային մեկնաբանությունից (7-րդ հոդվածի 2-րդ կետի (b) ենթակետ, 20-րդ հոդվածի 1-ին կետ, 21-րդ հոդվածի 1-ին կետ) բխում է սնանկության վարույթի համաշխարհային ազդեցությունը, այն է՝ պարտապանի ողջ ակտիվների և գույքի նկատմամբ, որտեղ էլ դրանք գտնվեն: Նախատեսված է նաև սնանկության գործով կառավարչի անսահմանափակ վերահսկողությունը պարտապանի գույքի նկատմամբ, նույնիսկ եթե այն գտնվում է այլ պետության տարածքում: Կանոնակարգի 19-րդ հոդվածի ուժով անդամ բոլոր պետություններում դատական ակտերը, որոնք կայացվել են պարտապանի հիմնական շահերի կենտրոն հանդիսացող պետությունում, ինքնաբերաբար ճանաչվում և կատարվում են[1]:

Չնայած ունիվերսալ մոդելին բնութագրական նշված առանձնահատկությունների ուղղակի ամրագրմանը՝ կանոնակարգը քննարկվող սկզբունքից նախատեսում է նաև առանձին բացառություններ (օրինակ, երկրորդային վարույթներ հարուցելու հնարավորություն և այլն): Այսինքն՝ կանոնակարգի դրույթների համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս պնդել, որ կանոնակարգի հիմքում բոլոր դեպքերում առավելապես ընկած է ձևափոխված ունիվերսալիզմի սկզբունքը:

ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի ընդունած «Անդրսահմանային սնանկության մասին» մոդելային օրենքն[2] արդեն անդրադառնում է միայն վերը թվարկված առանձնահատկությունների մի մասին, որը բացատրվում է այն բանով, որ մոդելային օրենքը առավելապես վերաբերում է դատական ակտերի ճանաչման և աջակցության հարցերին: Այսինքն՝ մոդելային օրենքի դրույթները կարող են կիրառվել միայն, երբ արդեն իսկ առկա են անդրսահմանային սնանկության վարույթում կայացված դատական ակտեր, և բարձրացվել են դրանց ճանաչման, կատարման և դատական աջակցության հարցերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում անհրաժեշտ է որդեգրել այնպիսի մեխանիզմներ, որոնք կզուգակցեն

---

[1] Տե՛ս https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32015R0848, հղումը՝ 30.11.2021 թվականի դրությամբ:

[2] Տե՛ս https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/1997-model-law-insol-2013-guide-enactment-e.pdf:

ունիվերսալ և տարածքային սկզբունքներին բնութագրական առանձնահատկությունները և կանոնները՝ առանց նախապատվությունը տալու նշված սկզբունքներից որևէ մեկին՝ հաշվի առնելով այդ մոդելներից յուրաքանչյուրի գործնական կիրառման գործընթացում ծագած խնդիրները և առաջ քաշված մարտահրավերները, որոնց լուծումները, մեր համոզմամբ, միայն մեկ մոդելի շրջանակում հնարավոր չէ գտնել:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРИНЦИПОВ ТРАНСГРАНИЧНОЙ НЕСОСТОЯТЕЛЬНОСТИ

Гоар Григорян
Аспирант кафедры гражданского процесса ЕрГУ,
Судья суда первой инстанции общей юрисдикции Гегаркуникского области РА

Статья посвящена принципам и методам трансграничной несостоятельности. В статье раскрываются особенности, а также преимущества и недостатки двух основных методов трансграничной несостоятельности (территориальности и универсализма). Кроме того, в работе представлены основные положения правовых документов, принятых международными организациями о территориальности и универсализме, и делаются соответствующие выводы.

COMPARATIVE ANALYSIS OF THE PRINCIPLES OF CROSS-BORDER INSOLVENCY

Gohar Grigoryan
PHD Student at the YSU Chair of the Civil Procedure,
Judge of the First Instance Court of General Jurisdiction of Gegharkunik Region

The article is devoted to the principles and methods of cross-border insolvency. The article reveals the peculiarities, as well as the advantages and disadvantages of the two main methods of cross-border insolvency (territoriality and universalism). Moreover, the article presents the main provisions of legal documents adopted by famous international organizations about territoriality and universalism, and respective conclusions are made.

Բանալի բառեր - *անդրսահմանային սնանկություն, սկզբունք, ունիվերսալ, տարածքային, պարտատեր, պարտապան, օտարերկրյա*
Ключевые слова: *трансграничная несостоятельность, принцип, универсализм, территориальность, кредитор, должник, иностранный*
Key words: *cross-border insolvency, principle, universalism, territorialism, creditor, debtor, foreign*